ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք.Գավառ 04.03.2011թ.

Նախագահում էր մարզպետ Ն.Պողոսյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 85 -ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա.Ղուկասյանը, Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս.Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ , մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, զինկոմներ, անձնագրային բաժինների պետեր, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաշվետվությունը 2010թ կատարված աշխատանքների և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:
   /Զեկ. Ն. Պողոսյան - մարզպետ/

2. Մարզում 2011թ իրականացվելիք ծրագրերի մասին:
   / Զեկ. Ա. Ղուկասյան - մարզպետի տեղակալ/

3. Ընտանեկան նպաստի համակարգում փաստագրումների ընթացքի մասին:
   / Զեկ. Ա. Ղուկասյան - մարզպետի տեղակալ/

4. Նախադպրոցական և միջնակարգ կրթական հաստատություններում սովորող երեխաներին բնակչության պետական ռեգիստրում գրանցելու մասին:
   / Զեկ. Ա. Ղուկասյան - մարզպետի տեղակալ/

5. Մարզում գարնանացանի նախապատրաստման աշխատանքների մասին:
   /Զեկ. Գ. Ստեփանյան – մարզպետի տեղակալ/

6. 2011թ մարդահամարի նախապատրաստման միջոցառումների մասին:
/Զեկ. Գ. Ստեփանյան – մարզպետի տեղակալ

Արտահայտվեցին՝

Լ.Աբրահամյանը - Շատվան համայնքի ղեկավար
Հ.Գաբոյանը - Խաչաղբյուր համայնքի ղեկավար
Լ.Խաչատրյանը - Լճավան համայնքի ղեկավար
Վ.Խլոյանը - Վարդենիսի քաղաքապետ
Ա. Առաքելյանը - Զովաբեր համայնքի ղեկավար
Վ.Մելքոնյանը - Գեղարքունիքի ԳԱՄԿ-ի տնօրեն
Ս.Մաթևոսյանը - Մարտունու անձնագրային բաժնի պետ

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն.Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝
1) ս/թ հունվար և փետրվար ամիսների հարկային եկամուտների հավաքագրումների թերացումները լրացնել մինչև մարտ ամսվա վերջը: Հետևողականորեն ապահովել յուրաքանչյուր ամսում հարկային եկամուտների համամասնական հավաքագրումները.
2) վերանայել 2011թ համայնքային բյուջեի պլանային ցուցանիշները, այն հաշվով, որ պահպանվեն 2010թ պլանային ցուցանիշները.
3) ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում, ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության, և մարզպետին:Նշված ժամկետում ՀՀ արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր.
4) ,,ՏԻՄ,, ՀՀ օերնքի 30-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանու որոշումները յոթնօրյա ժամկետում ուղարկել մարզպետարան.
5) անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել 2011թ անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին: Ս/թ հունիսի 1-ից հետո համայնքներում հասցեների զանգվածային նոր փոփոխություններ չիրականացնել.
6) համագործակցել մարզի անձնագրային բաժինների, ՀՀ անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումների և համայնքների անասնաբույժների հետ՝ ընտանեկան նպաստի համակարգում փաստագրումների գործընթացը հնարավորինս արագացնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ